



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

№ *սբզ քհժք/նք*-ի 2008 թ.

թիվ *100-Կ*

«ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման («Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2007 թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1218-Ն որոշման խմբագրությամբ),

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 55-րդ, 63-րդ - 66-րդ և 116-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 19-րդ և 68-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ԴԻԼԻՋԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված թվով 7160 հատ 5,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը փոխարկվում են «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 7160 հատ 5,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի:

2. Հաստատել ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ԴԻԼԻՋԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված թվով 4967 հատ 4,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը փոխարկվում են «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 1931 հատ 4,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի:

3. Հաստատել «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները համաձայն սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի և տեղաբաշխման արդյունքում ձևավորված կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 45,455,000 (քառասուն հինգ միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար) դրամ, որը կազմում է 9091 (ինը հազար իննսունմեկ) հատ 5,000 (հինգ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր:

4. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ԴԻԼԻՋԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» և ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ԴԻԼԻՋԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման միջոցով վերակազմակերպման ճանապարհով ստեղծել «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» անվանումով փակ բաժնետիրական ընկերություն:

5. Սահմանել, որ «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության և սպասարկման (հիվանդանոցային, արտահիվանդանոցային, շտապ բուժօգնություն և այլն) կազմակերպումը:

6. Հաստատել «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը:

7. Սահմանել, որ «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում: «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ընկերության տնօրենների խորհրդին վերապահված հարցերի լուծումը իրականացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, բացի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման հետ կապված հարցերից, որոնց լուծումը վերապահվում է ընկերության հիմնադրի կողմից լիազորված պետական կառավարման մարմնի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին:

8. «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Սիլվա Պետրոսյանին (անձնագիր՝ AA 0676445 տրված 28.11.1996 թ. 036 կողմից, բնակության վայրը՝ ՀՀ ք. Երևան, Ավան-Առինջ, շենք 3/3, բն. 18):

9. Սահմանել, որ «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման համար վերստուգող հանձնաժողով չի կազմավորվում և Հանձնաժողովի իրավասությունները դրվում են վերստուգողի վրա, որին նշանակում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետը:

10. «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության վերստուգող նշանակել Արթուր Արզումանյանին:

11. Սահմանել, որ «ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի (բացի ընկերության լուծարման, վերակազմակերպման, կանոնադրական կապիտալի նվազեցման հարցերից) լուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ՂՈՒԱՐՅԱՆ